Մեծ

Ռափայել Պատկանյան

Գընա՛, իմ որդյակ, աշխարհքըս անցի՛ր.
Պանծալի անո՛ւն Մեծի դու ստացի՛ր։

Ու գընաց որդին, շատ քըրտինք թափեց,
Մեծ հարըստություն, մեծ գանձ ժողովեց,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով.
— Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով։

— Չէ՛, չէ՛. թեև դու բորսայի ես զարդ,
Բայց քեզ չեմ ասիլ տակավին մեծ մարդ։

Նա գընաց մըտավ իմաստնոց տաճար,
Եղավ խորիմաստ գիտուն ու հանճար,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով.
— Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով։

— Չէ՛, չէ՛. թեև դու գիտությանց ես զարդ,
Բայց քեզ տակավին չեմ ասիլ մեծ մարդ։

Պահով, աղոթքով մըտավ անապատ,
Քուր[1]ձ հազավ մարմնուն, հրաշքներ գործեց շատ,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով.
— Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով։

— Եդեմա[2] դրախտին էլ լինիս դու զարդ,
Ես քեզ տակավին չեմ ասիլ մեծ մարդ։

Ու գընաց որդին, դարձավ զորավար,
Խելքով, քաջությամբ տիրեց շատ աշխարհ,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով.
— Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով։

— Չէ՛, չէ՛. թեև դու զոռ դաշտին ես զարդ,
Բայց քեզ տակավին չեմ ասիլ տակավին մեծ մարդ։

Ու գընաց որդին մի երկիր օտար,
Հրեշք ու ցավերե մաքրեց այն աշխարհ,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով.
— Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով։

— Օտար աշխարհի թեև եղար զարդ,
Բայց քեզ չեմ ասիլ տակավին մեծ մարդ։

Ու գընաց որդին… Հա՜, սարն էր գլորման…
Դեմ տըվեց ուսը, չը թողեց անկման…
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով.
— Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով։

— Դյուցազների մեջն էլ լինիս դու զարդ,

Բայց քա՛վ[3] ինձ ասել քեզ համար մեծ մարդ։

Ու գնաց որդին գըլխակոր, տըրտում,
Հոգին վըրդոված, ցավ ու դարդ սըրտում,
Մաշվում էր խեղճը, զոռ տալով խելքին՝
Հե՞ր չարժանացավ հոր գովասանքին…

Նորա եղբայրը գերի էր տարած,
Թըշնամու ձեռքով տունը ավերած.
Ճիգ արավ, գլուխը վըտանգի ձըգեց…
Ազատեց եղբորն ու տունը կանգնեց…

Հանկարծ… սար ու ձոր, ծով դըղըրդեցան,
Բյուրք բյուրոց բերնով գոչեց ազգ մարդկան.
«Մեծ Մարդու անուն դու ա՛յժմ ըստացար,
Եղբորդ հիշեցիր ու քեզ մոռացար»։

Տողատակեր

1. ↑ քուրձ- այծի մազից հյուսած կոպիտ կտոր. այդպիսի կտորից կարված զգեստ, *հնց.* նույն կտորից կարված կրոնավորի զգեստ
2. ↑ եղեմ (կրոն.)- դրախտ, փխբ. երանավետ տեղ
3. ↑ քավ- հեռու ինձնից (քեզնից)